Մանկավարժություն և դասավանդման մեթոդիկա

Աիդա Թոփուզյան
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ.հասցե՝ aidatopuzyan@mail.ru

Գայանե Հարությունյան
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Էլ.հասցե՝ har.gayane1@mail.ru
DOI: 10.53614/18294952-2022.2-139

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2021թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն շրջանառության մեջ է դրել կրթության հեռանկարների հարցերով միջազգային հանձնաժողովի «Վերաիմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները» խորագրով զեկույցը, որտեղ ներկայացված են կրթության նոր հանրային համաձայնագրի ձևավորման և երկխոսության ծավալման ու գործողությունների վերաբերյալ առաջարկներ: Զեկույցում նշված են հինգ ուղղություններ, որոնց փոխակերպումը կարող է վերաիմաստավորել ու նորացնել ժամանակակից կրթությունը: Դրանք են մանկավարժությունը, ուսումնական ծրագրերը, դասավանդման մեթոդաբանությունն ու մեթոդիկան, դպրոցների կառուցվածքն ու բովանդակությունը, ինչպես նաև «ողջ կյանքի ընթացքում և սոցիալ-մշակութային տարբեր հարթակներում ընձեռնվող կրթական լայն հնարավորությունները»: Այսինքն՝ անհրաժեշտ է փոխել հետևյալ հինգ կետերը՝ դաս-դասարանային համակարգը, ուսումնական ծրագրերը, որոնք ընդամենը մեկ առարկայի ծրա-

գիր են, դասավանդումը, որը դիտարկվում է որպես անհատական գործունեություն, դպրոցները, որոնք նույնպես նույն ընթացակարգով են գործում և ընտանիքից ու համայնքից մեկուսացած երեխաների որոշ խմբերի կրթության կազմակերպումը:

Հոդվածում ներկայացված են ՀՊՄՀ բոլոր ֆակուլտետներում դասավանդվող «Մանկավարժական մարդաբանություն» մագիստրոսական դասընթացի նպատակն ու վերջնարդյունքները, ինչպես նաև օգտագործվող և վերոնշյալ հմտությունների ձևավորմանը նպաստող մանկավարժական որոշ տեխնոլոգիաներ և մեթոդներ: Ներկայացրել ենք նաև մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները՝ նպատակ ունենալով գնահատել դասընթացի արդյունավետությունը՝ կիրառվող մեթոդների և վերջնարդյունքների համապատասխանության տեսանկյունից ու ժամանակակից մանկավարժության պահանջներից:

Ներկայացվող հոդվածում առաջին պլան են մղվում ուսուցման փոխներգործուն այն մեթոդները, որոնք միտված են XXI դարի հմտությունների ձևավորմանը: «Մանկավարժական մարդաբանություն» դասընթացի շրջանակներում ներկայացված մեթոդներն օգտակար և կիրառելի կարող են լինել նաև այլ առարկաների դասավանդման ընթացքում:

Հիմնաբառեր. համագործակցության մանկավարժություն, գիտելիքի ստեղծում, հանրային բարիք, մարդու իրավունք, ուսումնական ծրագիր, մանկավարժական մարդաբանություն, փոխներգործուն մեթոդներ, քննադատական մտածողություն:

Ներածություն:

«Վերաիմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները» խորագրով ՅՈՒՆԵՍԿՕ-ի ի նպաստ կրթության հանրային նոր համաձայնագրի առանցքը կազմում են երկու կարևոր գաղափարներ՝ կրթությունը դիտարկվում է որպես մարդու իրավունք և հանրային բարիք (REIMAGINING OUR FUTURES TOGETHER, 2021)**:**

Ըստ այդմ՝ նոր մանկավարժությունն առաջարկում է.

- հրաժարվել մանկավարժական այն մոդելներից (դասեր, ուսուցման և գնահատման մեթոդներ), որոնց համար առաջնային են առաջադիմության անհատապաշտական և մրցակցային ձևերը,
- մանկավարժությունը դիտարկել որպես համագործակցային մասնագիտություն, որպես փոխհարաբերություն, շփում, որի ընթացքում դասավանդողն ու սովորողը միմյանցից սովորում են և միասին գիտելիք են ստեղծում,
- համագործակցությունն ու թիմային աշխատանքը, գիտելիքի միասին ստեղծումը, ռեֆլեքսիան, հետազոտությունը, կրթությանը վերաբերող ցանկացած հանրային բանավեճին մասնակցությունը բնորոշել որպես բուհի դասախոսի ամենօրյա գործունեություն,

- գտնել ուսումնառության ինչ պետք է սովորել և ինչ պետք է մոռանալ հարցերի պատասխանները (հրաժարվել չհիմնավորված, սխալ, ոչ գիտական պատկերացումներից և այլն),
- սովորեցնելը հիմնել միջառարկայական ուսումնական ծրագրերի վրա, այն իրականացնել համագործակցային և փոխներգործուն մեթոդների միջոցով՝ խնդրահեն արդյունքների ստացման ճանապարհով՝ կյանքի յուրաքանչյուր փուլում և ցանկացած տարիքում,
- համալսարանական կրթության ոլորտում դասավանդումը, արժեքային համակարգի ձևավորումը, հետազոտությունն ու նորարարությունը դնել առաջին պլանում: Հաշվի առնել այն հանգամանքը, որ նորարարությունն ու տեխնոլոգիան չեն կարող օգուտ տալ, եթե բացակայում է հմուտ մանկավարժությունը: Սա չի նշանակում եղածը ջնջել, զրոյացնել, սա նշանակում է վերլուծել գործող տեխնոլոգիաների և մեթոդների ազդեցությունը, գտնել յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները կրթության առջև դրված ժամանակակից խնդիրներին համապատասխան և որոշել հին ու նոր մեթոդների առանձին կամ զուգահեռ օգտագործման եղանակները, ընտրել այն ամենը, ինչը թույլ կտա միասին փնտրել և միասին ստեղծել նոր գիտելիք:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ըստ վերոհիշյալ զեկույցի ժամանակակից մանկավարժությունը դիտարկվում է որպես կոլեկտիվ փոխհարաբերությունների գործընթաց, որը խարսխված է համագործակցության և համերաշխության վրա, հիմնված է փոխօգնության, փոխկապվածության, փոխկախվածության, անհատական և կոլեկտիվ պատասխանատվության զուգորդման սկզբունքների վրա: Այն առաջ է քաշում միջառարկայական, միջսերնդային, միջմշակութային ծրագրահենք ու խնդրահենք ուսումնառության կազմակերպման պահանջը: Հետևաբար՝ կրթության մասին նոր համաձայնագիրը ստիպում է այլ կերպ դիտարկել կրթությունը, այլ կերպ մտածել կրթության մասին, այլ կերպ վերաբերվել կրթությանը: Առաջին պլան են մղվում այն տեխնոլոգիաներն ու մեթոդները, որոնք ձևավորում են ինքնուրույն և քննական-վերլուծական մտածողությունը, ապագան կանխատեսելու, փոփոխություններին հարմարվելու, կոնկրետ խնդիրներ լուծելու, քննադատաբար մտածելու, երկխոսություն ծավալելու, սեփական կյանքը նախագծելու, մոդելավորելու և ճիշտ նպատակներ դնելու կարողությունները:

Հոդվածում փորձել ենք ներկայացնել մանկավարժական տեխնոլոգիաների վերոնշյալ կարողությունների ու հմտությունների ձևավորմանը նպաստող որոշ մեթոդների ազդեցությունը XXI դարի հմտությունների[1] համատեքստում՝ ՀՊՄՀ- ում դասավանդվող «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի դասավանդման օրինակով:

1 XXI դարի հմտությունների մեջ են մտնում՝ ինքնուրույն և քննական-վերլուծական մտածողության, ինտեգրված գիտելիքների կիրառման, ապագան կանխատեսելու, ճիշտ նպատակներ դնելու և նախագծելու, կոնկրետ խնդիրներ լուծելու, ինչպես նաև ինքնաճանաչողության, մոդելավորելու, միասին մտածելու, երկխոսություն ծավալելու կարողություններն ու հմտությունները:

Տեսական հիմունքներ և մեթոդ

Հոդվածը կառուցված է «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի շրջանակներում կիրառվող փոխներգործուն մեթոդների վերլուծահամադրական մեթոդի օգտագործման և արդյունավետության վերհանման հիման վրա՝ հիմք ընդունելով ժամանակակից մանկավարժության պահանջները և XXI դարի հմտությունները, որն ընկած է հոդվածի տեսական հիմքում և իրականացվել է դասընթացի արդյունավետության գնահատում առցանց հարցաթերթիկային հարցմամբ՝ Google Forms գործիքի կիրառմամբ: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ՀՊՄՀ Սկզբնական կրթության և Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետների մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի թվով 90 ուսանողի շրջանում, ովքեր անցնում են «Մանկավարժական մարդաբանություն» դասընթացը մեկ կիսամյակ:

Արդյունքներ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննադատորեն մտածելը և սովորելը XXI դարի կարևոր և առանցքային հմտությունն է, այդ գաղափարը ինտեգրված է օգտագործվող բոլոր մեթոդների իրականացման պահանջների մեջ: Բացի դրանից ներկայացվող բոլոր մեթոդները համապատասխանում են «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի վերջնարդյունքներին և համապատասխանեցված են դասավանդվող ֆակուլտետի տվյալ մասնագրի վերջնարդյունքներին: Ինչպես վերևում նշվեց **«Մանկավարժական մարդաբանություն»** առարկան դասավանդվում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բոլոր 10 ֆակուլտետների մագիստրոսի կրթական ծրագրում:

Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժներին մարդու մասին պատմական, տեսական, գիտական բանավեճի մեջ ներգրավելը, ուսանողների մանկավարժական, մարդաբանական մտածողության զարգացումը և մարդու բարձրարժեքության նկատմամբ դիրքորոշման ձևավորումը, կրթական համակարգերը հանուն մարդու և մարդու համար կառուցելու անհրաժեշտության նկատմամբ համոզմունք և վարքագիծ մշակելը: Դասընթացը նպաստում է ինչպես մասնագիտական գիտելիքների ձեռք բերմանը, այնպես էլ գործնական մասնագիտական ու ընդհանրական (փոխանցելի) կարողությունների ձևավորմանը:

Այսպես, դասընթացի վերջնարդյունքները բաժանված են երեք բաժինների.

- **մասնագիտական գիտելիք և իմացություն** բաժնում ուսանողից պահանջվում է ներկայացնել մանկավարժական մարդաբանության առարկան, նպատակը, խնդիրները, սկզբունքները, ստեղծման և կայացման պատմությունը, նշանակությունն ու տեղը կրթության հումանիզացման գործընթացում, վերլուծել և գնահատել կրթության ոլորտի օրենսդրությունը մարդաբանական տեսանկյունից, ներկայացնել և հիմնավորել մանկավարժական փոխգործակցության ընդունելի և անընդունելի մոդելներ, մարդաբանական նպատակահարմար կրթա-

կան մոդելներ և տեխնոլոգիաներ,

- **գործնական մասնագիտական կարողություններ** բաժնում ուսանողը պետք է կարողանա պլանավորել և իրականացնել աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքները մարդաբանական սկզբունքներով, անձնակենտրոն մեթոդներով և մանկավարժական տեխնոլոգիաներով, քննության առնել և ըստ հրատապության դասակարգել ժամանակակից մանկության հիմնախնդիրները, սեփական կարծիք արտահայտել քննարկվող հիմնախնդիրների լուծման ուղիների վերաբերյալ, մշակել դրանց լուծման քայլաշար, իրականացնել դպրոցում սովորողների դաստիարակության մակարդակի դիագնոստիկա, արդյունքների հիման վրա մշակել «հումանիստական ուղղվածություն ունեցող դպրոցի» մոդելը,
- **ընդհանրական/փոխանցելի կարողություններ** բաժնում պահանջվում է ՏՀՏ-ի օգտագործմամբ անցկացնել հետազոտություն (օրինակ՝ ավագ դպրոցականների շրջանում որոշել ՋԼՄ-երի ազդեցությունը սովորողների զարգացման և կայացման վրա), ստացված արդյունքների հիման վրա մշակել մանկավարժական պայմաններ՝ (տվյալ դեպքում «ՋԼՄ-երի ազդեցությունը կարգավորելուն»՝ ուղղված ուսուցչին և ծնողին) (Թոփուզյան, 2022, էջ 4–5):

Ինչպես վերևում նշվեց, քննադատաբար մտածելն ու սովորելը մեզ համար առանցքային հմտություն է, ուստի ցանկանում ենք ավելի մանրամասնել այդ տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները: Նախ՝ նշենք, որ «Critical» բառն առաջացել է հունարեն «krinein» բառից, որը թարգմանաբար նշանակում է դատել ինչ-որ բանի արժեքի մասին (Khachatryan, Khachatryan, 2021, էջ 106): Իսկ քննադատական մտածողությունը սահմանում է որպես. «տեղեկատվությունը տրամաբանորեն վերլուծելու, հիմնավորված դատողություններ, եզրակացություններ անելու և ստացված արդյունքները տարբեր պայմաններում կիրառելու կարողություն» (Мижериков, 2004, էջ 168): Իսկ ըստ կրթական տեխնոլոգիաների հանրագիտարանի քննադատական մտածողությունը. «մարդու ինտելեկտուալ գործունեության տեսակ է, որը բնութագրվում է ընկալման, յուրացման, տեղեկատվության նկատմամբ օբյեկտիվ մոտեցման բարձր մակարդակով» (Селевко, 2006, էջ 243): Քննադատական մտածողությունը, լինելով մարդու մտածողության հիմնաքարն ու զարգանալով մարդու անձնական կյանքի փորձի հիման վրա, բնորոշվում է ճանաչողական հետաքրքրությամբ ու մարդուն հնարավորություն է տալիս ակտիվորեն աշխատել տեղեկատվության հետ՝ ձևավորելով նոր գիտելիք ստեղծելու, իմաստավորված հարցեր առաջադրելու ու վերլուծելու, համագործակցելու, որոնողական ու հետազոտական աշխատանքներ իրականացնելու, կշռադատելու ու ինքնուրույն եզրահանգումներ անելու, նախագծելու ու սեփական որոշումների հետևանքները կանխատեսելու կարողություններ (Հարությունյան, 2014, էջ 69):

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշ-

ռադատում, որը հաճախ ներկայացվում է հապավումով՝ որպես ԽԻԿ համակարգ. այն հստակ տեխնոլոգիական ալգորիթմ է: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի առաջին՝ խթանման փուլն առավելապես իրականացնում է մոտիվացիոն և հաղորդակցական գործառույթներ, երկրորդ՝ իմաստի ընկալման փուլի հիմնական գործառույթներն են տեղեկատվականը և համակարգողը, իսկ երրորդ՝ կշռադատման փուլն ուղղված է գնահատման և արժևորման գործառույթների իրականացմանը (Зир-Бек, 2001, էջ 13–23):

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ XXI դարում առանցքային համարվող քննադատական մտածողությունը նպատակաուղղված, կշռադատված ու տրամաբանված մտածողություն է, իսկ քննադատական մտածողությամբ մարդիկ այսօր պետք են աշխատանքային գործունեության բոլոր ոլորտներում: Մանկավարժական կրթության իրականացման տեսանկյունից շատ կարևոր է, որ դասավանդվող յուրաքանչյուր առարկա նպաստի ինչպես ապագա մանկավարժների, այնպես էլ աշակերտների քննական-վերլուծական մտածողության զարգացմանը, քանի որ մանկավարժի մասնագիտության համար շատ կարևոր է ամեն ինչը քննության ենթարկելը, յուրաքանչյուր երևույթ, փաստ, իրադարձություն վերլուծելը, դրա հավաստիությունը ստուգել կարողանալը (fact cheking), ակտիվ գործելը, նախագծելու և կանխատեսելու կարողությունը, իր աշխատանքի մեջ բազմազանություն մտցնելն ու ստեղծագործ լինելը:

Ստորև ներկայացնում ենք «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի վերջնարդյունքներն ապահովող մի շարք փոխներգործուն մեթոդներ, որոնց կիրառման հիմքում ինտեգրված է քննադատաբար մտածելու և սովորելու կարողությունը.

- **մտագրոհը,** երբ սովորողների ակտիվությունը խթանելու միջոցով բացահայտվում են ուսանողների գիտելիքները ուսումնասիրվող թեմայից, այնուհետև դրանք համակարգվում և ընդհանրացվում են՝ հեշտացնելով նոր նյութի ընկալումն ու յուրացումը,
- **տեքստի նշագրումը, կրկնակի գրառումների օրագիրը,** երբ սովորողների գիտելիքները համակարգվում ու իմաստավորվում են՝ սովորողների կողմից ուսուցանվող նյութը առավել խորությամբ ուսումնասիրելու, կարևորը երկրորդականից առանձնացնելու ու հիմնավորելու, հին ու նոր գիտելիքների միջև գիտակցված կապեր ստեղծելու շնորհիվ,
- **Վենի դիագրամը, պրիզման,** երբ սովորողները պետք է կարողանան ստացած նոր գիտելիքի արդյունքները կշռադատել, համեմատել, վերլուծել, համադրումներ ու ընդհանրացումներ կատարել և բացահայտել երևույթի առանձնահատկությունները՝ նմանություններն ու տարբերությունները,
- **կենսագրական մեթոդը,** որը ենթադրում է կոնկրետ անձի կյանքի ու կենսագրության ուսումնասիրություն, օբյեկտիվ վերլուծություն ու ընդհանրացում, կարևոր անձնային որակների, արժեքների իմաստավո-

րում, ընդօրինակման արժանի գործունեականության բացահայտում և կշռադատում,

- **մոդելավորումը,** երբ ուսանողները վերլուծություն, համադրում ու վերացարկում են իրականացնում, մեկնաբանում ու իմաստավորում են ուսումնասիրվող հիմնախնդիրը, այնուհետև կանխատեսում, մշակում կամ կառուցում են ուսումնասիրվող իրադրության, երևույթի մոդելը,
- **բանավեճը,** որի ժամանակ ուսանողները սովորում են լսել, կշռադատել, համեմատել և քննադատաբար մոտենալ յուրաքանչյուր կարծիքի: Բանավեճը ուսանողներին սովորեցնում է երկխոսություն ծավալել, լսել բոլորի կարծիքները, կշռադատել դրանցից յուրաքանչյուրը՝ որոշելու համար որ մեկին միանալ՝ հիմնավորելով սեփական ընտրությունը: Այն յուրաքանչյուր ուսանողի հնարավորություն է տալիս միասին մտածել և մասնակցել բանավեճի թեմայի վերաբերյալ միասնական կարծիքի ձևավորմանը և ազդում է ուսանողների օբյեկտիվ ինքնագնահատականի ձևավորման վրա,
- **նախագիծը** «Մանկության հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում» թեմայով: Կուրսը բաժանվում է խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ընտրում է երկրում մանկության որևէ մի հիմնախնդիր (կրթության, առողջ ապրելակերպի, երեխաների իրավունքների, երեխաների աշխատանքի շահագործման, բռնության, տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման և դրա ազդեցության և այլն): Թիմային աշխատանքի միջոցով ուսումնասիրում և բացահայտում են տվյալ հիմնախնդրի վիճակը հանրապետությունում, կանխատեսում և մոդելավորում են վիճակը բարելավելու ուղիներ: Արդյունքում կլոր սեղանի ձևով ներկայացվում է յուրաքանչյուր խմբի աշխատանքը և առաջարկությունները, ընդունվում է միացյալ կոմյունիկե՝ հասցեագրված տվյալ հիմնախնդրի համար պատասխանատու կառույցի ղեկավարին՝ կից նրան ուղարկելով տվյալ հիմնախնդրի լուծման բոլոր առաջարկություններն ու քայլաշարը: Նախագծային տեխնոլոգիայի այս մեթոդը հնարավորություն է տալիս ուսանողներին թիմով աշխատել, ճիշտ նպատակներ դնել, կոնկրետ խնդրի լուծման քայլերը և բարելավման ուղիները կանխատեսել, միասին քննադատորեն մտածել և այլն,
- **բանավեճային քննարկումը,** որը սովորաբար անցկացվում է «Միջավայրի որևէ գործոնի ազդեցությունը անձի զարգացման և ձևավորման գործում» թեման դասավանդելիս՝ մասնավորապես միջավայրի ամենակարևոր գործոնի ԶԼՄ-ների ազդեցության թեման ուսումնասիրելիս: Այս մեթոդը համագործակցային մեթոդ է, կուրսը բաժանվում է խմբերի և թիմային աշխատանքի միջոցով յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է որևէ մեկ հեռուստաալիքի գործունեությունը, մասնավորապես, երեխաներին և երիտասարդությանը հասցեագրված հաղորդումների դաստիարակչական, ճանաչողական, արժեքային ներուժն ու դաստիարակչական նշանակությունը: Յուրաքանչյուր խմբի աշխատանք ավարտվում է տվյալ ԶԼՄ-ի դաստիարակչական ազդե-

ցությունը բարձրացնելու առաջարկների մշակմամբ: Ուսանողներից կազմված փորձագետների խումբը գնահատում և ընտրում է լավագույն առաջարկությունների պլանը և հիմնավորում իր գնահատականը՝ դնելով լսարանի քննարկմանը, բայց վերջնական որոշումը և գիտակցված ընտրությունը կայացնում է լսարանը: Բանավեճային քննարկումը հնարավորություն է տալիս ուսանողին դիտարկածը արժևորելու և գնահատելու, գիտակցված ընտրություն կատարելու, կոնկրետ խնդիրներ լուծելու, կանխատեսելու, նախագծելու կարողություններ,

- **քարոզը** տրվում է սովորաբար ուսանողի ինքնուրույն աշխատանքի շրջանակում՝ դասընթացի վերջում, որպես ամփոփիչ աշխատանք՝ պարզելու համար, թե որքանով է ուսանողը տիրապետում մանկավարժական բառապաշարին ու մտածելակերպին: Քարոզի թեմաները տարեցտարի փոխվում են, օրինակ՝ «Երեխան մարդ է և ընկեր», «Յուրաքանչյուր երեխա ապրելու իրավունք ունի», «Մանկավարժական ազդեցության անընդունելի մոդելները», «Մանկավարժական համատեղելիության մանկավարժական պայմանները» և այլն: Քարոզը որպես մեթոդ նպաստում է ուսանողի տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելուն, հռետորական արվեստի սկզբունքներին տիրապետելուն, մարդկանց զգացմունքների վրա ազդելուն, տվյալ թեման քննադատական տեսանկյունից բացահայտելու և ներկայացնելու, մտքերը հստակ և կարճ շարադրելու, լսարանի վրա ազդեցություն թողնելու, լսարանին համոզելու և իր հետևից տանելու հմտությունների, ինքնաճանաչողության և ինքնագնահատման ձևավորմանը,
- **մանկավարժական իրավիճակների ստեղծումը և լուծումը,** որը կարող է զուգորդվել դերային խաղերով՝ թեման ավելի խորացնելու և ամրապնդելու համար, սովորեցնում է յուրաքանչյուր իրավիճակ մանրակրկիտ քննության առնել, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել և ընտրություն կատարել, որոշում ընդունել, տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործել, միմյանց հետ համագործակցել և այլն: Մանկավարժական իրավիճակների ստեղծողը կարող է լինել ինչպես դասախոսը, այնպես էլ ուսանողների խմբերից յուրաքանչյուրը:

Քննարկում

Նպատակ ունենալով պարզել, թե մշակված դասընթացը որքանով է նպաստում սովորողների քննական-վերլուծական մտածողության զարգացմանը՝ «Մանկավարժական մարդաբանություն» դասընթացն ուսումնասիրող ուսանողների շրջանում իրականացրել ենք հետազոտական աշխատանք: Այն շատ կարևոր է նաև հետադարձ կապն ապահովելու և դասընթացի ծրագիրը վերանայելու ու կատարելագործելու տեսանկյունից: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են մեր համալսարանի Սկզբնական կրթության և Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետների մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողների շրջանում, ովքեր անցնում են

այս դասընթացը մեկ կիսամյակ: Հարցման են ենթարկվել 90 ուսանող:

Ստորև ներկայացնենք մեր կողմից իրականացված հարցման արդյունքները: Առաջին՝ «Մանկավարժական մարդաբանություն դասընթացը նպաստե՞լ է ինքնուրույն որոշումներ կայացնելուն» հարցին հարցված ուսանողների մեծ մասը՝ 76%-ը տվել է դրական պատասխան, իսկ 24%-ը պատասխանել է «մասամբ»: Հաջորդ հարցին, թե արդյո՞ք դասընթացը նպաստել է ուսանողների որոնողական աշխատանքների իրականացմանը, հարցմանը մասնակից ուսանողների գերակշռող մեծամասնությունը՝ 83%-ը դրական է պատասխանել և միայն 17%-ն է պատասխանել «մասամբ»: Այն հարցին, թե դասընթացն արդյո՞ք նպաստել է թիմով աշխատելու կարողության ձևավորմանն ու տարաբնույթ քննարկումների մասնակցությանը՝ լսելի դարձնելով համակուրսեցիների ու սեփական տեսակետները, ուսանողների գերակշիռ մեծամասնությունը՝ 87%-ը տվել է դրական պատասխան: Հաջորդ հարցին, թե դասընթացի շնորհիվ արդյո՞ք ստացված տեղեկատվությունը ուսումնասիրել եք տարբեր կողմերից ու եզրակացություններ արել, գրեթե բոլոր ուսանողները պատասխանել են «այո»: Հարցմանը մասնակից ուսանողների գրեթե կեսը 53%-ը հաջորդ՝ «Մանկավարժական մարդաբանություն դասընթացը նպաստե՞լ է հետազոտական աշխատանքների իրականացմանը» հարցին տվել է դրական պատասխան, իսկ նրանց 41%-ը նշել է, որ դասընթացը մասամբ է նպաստել, միայն 6%-ն է (հարցմանը մասնակից միայն 5 ուսանող) այս հարցին տվել է բացասական պատասխան:

Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ «Մանկավարժական մարդաբանություն» դասընթացի շնորհիվ ուսանողները համագործակցելու հնարավորություն են ունեցել, թիմային աշխատանքի միջոցով ստացված տեղեկատվությունն ուսումնասիրել են տարբեր կողմերից, ստեղծել են միջառարկայական կապեր, համապատասխան եզրակացություններ ու դատողություններ են արել: Դասընթացը նպաստել է ինչպես ինքնուրույն որոշումներ կայացնելուն ու որոնողական աշխատանքների իրականացմանը, այնպես էլ մասամբ նպաստել է մեկ դասընթացի շրջանակներում բավականին ծավալուն և բարդ համարվող հետազոտական աշխատանքների իրականացմանը: Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողների մոտ ձևավորվել է քննադատական մտածողություն, քանի որ կարծիք հայտնել, թիմով աշխատել, դիմացինին լսել, կանխատեսել ու նախագծել, ինքնուրույն որոշումներ կայացնել կարող է քննադատաբար մտածող մարդը: Վերը նշված որակները շատ կարևոր են ժամանակակից հասարակության մեջ ապրող յուրաքանչյուր մարդու համար և հատկապես մանկավարժության ոլորտում աշխատող մասնագետների համար: Իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքների ներկայացման ու դասախոսների և ուսանողների կողմից քննարկման ժամանակ ուսանողները փաստեցին, որ աշխատանքի ընթացքում հասկացել են, որ միասին աշխատելը, միասին մտածելը շահաբեր է, քանի որ սովորում են միմյանցից և միասին գիտելիք են ստեղծում: Ուսանողներն ուշադրություն էին դարձնում այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են՝ ինքնաճանաչողությունը, ճիշտ նպատակներ դնելու, հե-

տազոտելու, կանխատեսելու ու նախագծելու կարողությունների ձևավորումը: Ուրախալի էր, նաև այն, որ կարևորվեց փոխաջակցության, փոխօգնության ու հանդուրժողականության դրսևորումը:

Եզրակացություն

Այսպիսով, կրթության հեռանկարների համատեքստում ուզում ենք առանձնացնել մի քանի առանցքային կետ, կարևոր է, որ.

- դասավանդվող ցանկացած առարկայի ծրագիր լինի ամբողջական, նպատակն ու խնդիրները, առաջադրանքները, կիրառվող տեխնոլոգիաներն ու մեթոդները համապատասխանեն առարկայի վերջնարդյունքներին,
- մանկավարժական բուհում դասավանդվող ցանկացած առարկա նպաստի ապագա ուսուցիչներին անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորմանը՝ անձնային և մասնագիտական որակների ու արժեքների ձևավորմանը,
- կիրառվող բոլոր փոխներգործուն մեթոդներն ու գործնական աշխատանքները նպաստեն XXI դարի հմտությունների ձևավորմանը՝ միտված լինեն քննադատաբար մտածելու և սովորելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

Թոփուզյան, Ա. (2022) *«Մանկավարժական մարդաբանություն» դասընթացի ծրագիր (ՄԿԾ),* Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մանկավարժության ամբիոն:

Հարությունյան, Գ.Ն. (2014) *Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում,* Ատենախոսություն (ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»), Երևան,., 160 էջ:

Заир-Бек, С.И. (2011) *Развитие критического мышления на уроке: пособие для учителей общеобразоват. учреждений/* С.И. Заир-Бек, И.В. Муштавинская.- 2-е изд., дораб.- М.: Просвещение.-.223 с.

Селевко, Г.К. (2006) *Энциклопедия образовательных технологий.*- в 2 т.- т. 1.- М.: НИИ школьных технологий.-816 с.

Словарь-справочник по педагогике/ авт. сост. Мижериков В.А./ под ред. Пидкасистого П.И.- М.: ТЦ Сфера.- 2004.- 448 с.

Guides for teaching critical thinking. Heghine Khachatryan, Serob Khachatryan, Naira Movsisyan – ELEMENTS OF CRITICAL THINKING IN THE SCHOOL STANDARDS OF "CHESS" SUBJECT International Journal Scientia Paedagogica Experimentalis (SPE), 2021, LVIII, 1, 105-118, ISBN 0582-2351.

REIMAGINING OUR FUTURES TOGETHER. A new social contract for education. Published in 2021 by the UNESCO, 186 p.

References

Topuzyan, A. (2022) *Mankavarzhakan mardabanutyun dasyntaci tcragir (MKTC)* ("Pedagogical Anthropology" Course Program (CPS)), ASPU after Kh. Abovyan, Chair

of Pedagogy. (In Arm.)
Harutyunyan, G.N. (2014) *Qnnadatakan mtatcoghutyan tekhnologian vorpes krtser dprotcakanneri tchanachoghakan karoghutyunneri zargacman mijoc ardi dprocum, Atenakhosutyun* (00.01 «Mankavarzhutyan tesutyun ev patmutyun») (The technology of critical thinking as a means of developing the cognitive abilities of primary school students in the modern school, Dissertation (00.01"Theory and history of pedagogy"), Yerevan, 160 ej. (In Arm.)
Zair-Bek, S.I. (2011) *Razvitie kriticheskogo myshleniya na uroke: posobie dlya uchiteley obshcheobrazovat. Uchrezhdeniy* (The development of critical thinking in the lesson: a guide for general education teachers. institutions)/ S.I. Zair-Bek, I.V. Mushtavinskaya- 2-e izd., dorab.- M.: Prosveshchenie.-223 s. (In Rus.)
Selevko, G.K. (2006) *Entsiklopediya obrazovatelnykh tekhnologiy* (Encyclopedia of educational technologies)- v 2 t.- t. 1.- M.: NII shkolnykh tekhnologiy.-816 s. (In Rus.)
Slovar-spravochnik po pedagogike (Dictionary-reference book on pedagogy)/ avt sost. Mizherikov V.A./ pod red. Pidkasistogo P.I. - M.: TTs Sfera.- 2004.- 448 s. (In Rus.)
Guides for teaching critical thinking. Heghine Khachatryan, Serob Khachatryan, Naira Movsisyan - ELEMENTS OF CRITICAL THINKING IN THE SCHOOL STANDARDS OF "CHESS" SUBJECT International Journal Scientia Paedagogica Experimentalis (SPE), 2021, LVIII, 1, 105-118, ISBN 0582-2351. (In Eng.)
REIMAGINING OUR FUTURES TOGETHER. A new social contract for education. Published in 2021 by the UNESCO, 186 p. (In Eng.)

Аида Топузян
Заведующая кафедрой педагогики
Армянского государственного педагогического университета имени Х.
Абовяна, доктор педагогических наук, профессор
Эл. адрес: aidatopuzyan@mail.ru

Гаяне Арутюнян
Преподаватель кафедры педагогики Армянского государственного
педагогического университета имени Х. Абовяна,
кандидат педагогических наук, доцент
Эл. адрес: har.gayane1@mail.ru

СОВРЕМЕННЫЕ ПЕДАГОГИЧЕСКИЕ ТЕХНОЛОГИИ И МЕТОДЫ В КОНТЕКСТЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПЕРСПЕКТИВ

В 2021г. ЮНЕСКО выпустила доклад Международной комиссии по перспективам образования под названием «Переосмысление перспектив нашего общего будущего», в котором представлены предложения по формированию нового общественного согласия в сфере образования и развитию диалога и действий в этой области. В докладе определены пять направлений, трансформация которых может переопределить и обновить современное образование. Это педагогика, учебная программа, методология и методика преподавания, структура и содержание школ, а также «широкие образовательные

возможности, предоставляемые на протяжении всей жизни и на различных социокультурных платформах». Таким образом, необходимо изменить следующие пять пунктов: классно-урочную систему, учебные программы, представляющие собой только одну предметную программу, преподавание, рассматриваемое как индивидуальная деятельность, школы, которые также действуют по тому же порядку, и организацию образования определенных групп детей, изолированных от семьи и общества.

В статье представлены цель и результаты магистерского курса «Педагогическая антропология», преподаваемого на всех факультетах АГПУ, а также некоторые педагогические технологии и методы, способствующие формированию навыков, необходимых для решения вышеперечисленных задач. Мы также представили результаты проведенных нами исследований с целью оценки эффективности курса с точки зрения соответствия используемых методов и результатов требованиям современной педагогики. В представленной статье на первый план выдвигаются интерактивные методы обучения, формирующие самостоятельное аналитическо-критическое мышление, умение применять интегрированные знания, прогнозировать будущее, ставить правильные цели и проектировать, решать конкретные задачи, а также навыки самосознания, моделирования, совместного мышления и диалога. Методы, представленные в рамках курса «Педагогическая антропология», которые направлены на формирование навыков XXI века, могут быть полезны и применимы при преподавании других предметов.

Ключевые слова: педагогика сотрудничества, создание знаний, общественное благо, права человека, учебная программа, педагогическая антропология, интерактивные методы, критическое мышление.

Aida Topuzyan
Head of the Department of Pedagogy,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Doctor of Pedagogical Sciences, Professor
Email: aidatopuzyan@mail.ru

Gayane Harutyunyan
Lecturer of the Chair of Pedagogy,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor
Email: har.gayane1@mail.ru

MODERN PEDAGOGICAL TECHNOLOGIES AND METHODS IN THE CONTEXT OF EDUCATION PROSPECTS

In 2021, UNESCO released the report of the International Commission on Education Prospects entitled “Reimagining our futures together”, which presents

proposals for the formation of a new social contract on education and the development of dialogue and actions. The report identifies five directions, whose transformation can redefine and renew modern education. They are pedagogy, curricula, teaching methodology and methods, the structure and content of schools, as well as "wide educational opportunities provided throughout life and in various socio-cultural platforms". That is, the following five points need to be changed: the classroom system, curricula that are just a single subject program, teaching that is viewed as an individual activity, schools that also follow the same procedure and the organization of the education of certain groups of children isolated from the family and community.

The article presents the purpose and results of the master's course "Pedagogical Anthropology" taught in all departments of ASPU, as well as some pedagogical technologies and methods that are used and contribute to the formation of the skills needed for reaching the above-mentioned objectives. We have also presented the results of the research work carried out by us with the aim of evaluating the effectiveness of the course in terms of the compliance of the used methods and results with the requirements of modern pedagogy. The presented article brings to the fore those interactive teaching methods that form independent and critical-analytical thinking, the ability to apply integrated knowledge, to predict the future, to set and design the right goals, to solve specific problems, as well as self-awareness, the skills of modeling, thinking together and developing dialogue. The methods presented within the "Pedagogical Anthropology" course, aimed at the formation of 21st century skills, can be useful and applicable during the teaching of other subjects.

Keywords: cooperative pedagogy, creation of knowledge, public good, human rights, curriculum, pedagogical anthropology, interactive methods, critical thinking.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. հոկտեմբերի 28-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. նոյեմբերի 1-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. նոյեմբերի 16-ին: